ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2012թ. N 8- Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 1996Թ. ԾՆՎԱԾ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով "Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, ի կատարումն ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի հանրապետական զինկոմիսարիատի "Զորակոչային տեղամասերին 1996թ. ծնված քաղաքացիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման վերաբերյալ" 22.08.2011թ. թիվ 2/2585 հրահանգի պահանջների, ելնելով մարզի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի զինվորական կոմիսարիատների կողմից ներկայացված որոշման նախագծերի քննարկման արդյունքներից՝

որոշում եմ.

1.Հաստատել Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի զինկոմիսարիատների կողմից ներկայացված 1996թ. ծնված արական սեռի քաղաքացիների կցագրման աշխատանքների նախապատրաստման և անցկացման վերաբերյալ որոշումները:

2.Հաստատել Իջևանի« Դիլիջանի« Բերդի և Նոյեմբերյանի զինկոմիսարիատների կողմից ներկայացված տեղական զորակոչային հանձնաժողովների կազմը /հավելված 1/:

3. Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի զինկոմներին /Գ. Սարգսյան, Գ,Ապինյան, Դ,Պապյան, Կ.Հարությունյան/.
ա/ Կցագրման աշխատանքների նախապատրաստումը և անցկացումը տարածքներում իրականացել 2012թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ "Զինապարտության մասին" ՀՀ օրենքի և հանրապետական զինկոմիսարի 22.08.2011թ. թիվ 2/2585 հրահանգի պահանջներին համապատասխան:
բ/ Կցագրման աշխատանքների ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիսը մեկ գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան, իսկ կցագրման ավարտից հետո 10-օրյա ժամկետում արդյունքների մասին ներկայացնել զեկուցագրեր:
գ/ Մարզպետի հաստատմանը ներկայացնել 1996թ. ծնված պատանիների զինծառայության նախապատրաստման աշխատանքների պլանը:

4. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը /պետ Կ.Դովլաթբեկյան/.

1) Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ենթակա բուժհաստատությունների կողմից կցագրման ենթակա պատանիների ամբողջական հետազոտման աշխատանքները սահմանված կարգով իրականացնելու համար

2) Կցագրման ընթացքում հայտնաբերված հիվանդ, բուժման ենթակա պատանիների բուժումը կազմակերպել այնպես, որ նրանք մինչև զորակոչը լինեն պիտանի զինծառայության

3) Տարածքային զինկոմիսարիատների կցագրման տեղամասերին հատկացնել բժիշկներ՝ 2012թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին բժշկական քննություն անցկացնելու համար:

5. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին /Ա.Փաշինյան/.

Հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համագործակցելու զինկոմիսարիատների հետ կցագրման աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել տարածքային զինկոմների վրա:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. հունվարի 13
ք. Իջևան